Պոկոտանոս կ'ըսէ. «29 կտորը համազօր չէ 170 հազար կտորի»: Կասկած չկայ, թէ յատկանշական գանձեր գողցուած են: Անոնց շարքին է սոււժերական Ուր քաղաքէն ցուրի ոսկեայ պատեանով գլուխ մը կողոպտուած մը, որ կու գայ Ն. Ք. 2400 թուականէն, քաջատեան թագաւորի մը նիւնուէն յայտնաբերուած պղինձ դիմակը, որ աւելի քան 4000 տարուան հնութիւն ունի, Ն. Ք. 3000էն գոյտեւած կնոզ մը մարմարէ գլուխը՝ յայտնաբերուած Ուրուքայէն, նոյն վայրէն յայտնաբերուած եւ նոյն թուականին պատկանող ճերմակ կրաքարէ ծիսական աման մը՝ մանուածապատ փորագրութիւններով, Ն. Ք. 2430 թուականի պատկանող քանակն չափի արձան մը, որ յայտնաբերուած է Ուրէն եւ կը ներկայացնէ էնթեմենա թագաւորը, ասորեստանեան Ասուր աստուծոյ փղոսկրեայ հսկայական մէկ բարձրաքանդակը եւ Ապոլոնի մարմարէ գլուխը, որ Ն. Ք. 4րդ դարու լուսնական օրինակի մը հռոմէական տարբերակն է:

Թէեւ աւելը կրնայ այնքան լայնածաւալ չլրլալ, ինչպէս յայտարարուած էր սկիզբը, սակայն տակաւին յստակ պատասխան մը չկայ ամէնէն կարեւոր հարցումին. ճիշդ որքան է կողոպուտին տարողութիւնը:

«Ճիշդ չեմ գիտեր», կ'ըսէ Հնութիւններու Պետական Մարմնին պատասխանատուն՝ Ժապէր Խալիլ:

Թէեւ թանգարաններու բազմաթիւ պատասխանատուներ սարսափով դիտեցին ամերիկեան եւ հաւանաբար կազմակերպուած աւազակախուճներու թանգարան ներխուժումը ու անոր 18 պատկերասրահներուն մէջ ցուցադրուած իրերուն կողոպուտը, պողպատէ մետաղներուն բացուելը, քանդակներուն փշրուելը եւ պահեստանոցներուն խորանկումը, սակայն պատասխանատուներն ալ ժամ շաշուի չեն առներ առաջին այն յայտարարութիւնները, թէ թանգարանին 170 հազար հնութիւններէ բաղկացած ամբողջ հաւաքածոն կորսուած է:

Կարգ մը թանկարժէք իրեր պատերազմէն առաջ պահուած էին կեդրոնական Դրամատան մէջ: Դրամատանը ռմբակոծուած է եւ ալ ժամ աւերակ է, սակայն պատասխանատուներ կ'ըսեն, թէ անոր նկուղները թերեւս անվնաս մնացած են:

Աւելի քան ջաշախարհային է այն իրողութիւնը, թէ հարիւրաւոր փոքր իրեր, որոնց շարքին՝ Ն. Ք. 9րդ դարուն պատկանող ասորեստանցի թագաւորի մը անգին արձանը, վերադարձուած են թանգարան, կարգ մը արարագաններու՝ մարդոց կողմէ, որոնք կ'ըսեն, թէ գանձեր տարած են գանոնք ապահով պահելու համար:

Աւելին. պողպատէ սնտուկ մը, որ գողցուած էր եւ կը պարունակէր 465 փոքր իրեր, գտնուած է Իրաքի Ազգային Քուրդիստի զինուորներուն կողմէ եւ վերադարձուած է թանգարան:

Սակայն թանգարանին վերադարձուած կարգ մը իրերը ընդօրինակութիւններ են: «Կողոպուտէն պահեստանոցներէն մէկը գրեթէ ամբողջութեամբ կը պարունակէր ցանկագրուած եւ վաւերական արձանագրութիւններով ընդօրինակութիւններ. կ'ըսէ Պոկոտանոս: Այսօր ստացայ 6 իրեր, որոնք բոլորն ալ գողցուած էին թանգարանին յուշանուէրներու վաճառատուներէն»:

Դժուար է գիտնալ, թէ ինչ իրեր գողցուած

են թանգարանէն: Պատճառներէն մէկը թանգարանին հաւաքածոյին իրերը ցանկագրող գլխաւոր ցուցակի մը չգոյութիւնն է: Թէեւ կարգ մը ցանկեր փրկուած են, սակայն անոնք կը պատկանին առանձին բաժանմունքներու եւ համակարգիչներու մէջ չեն գետնադրուած: Կարգ մը պարագաներու անոնք նոյնիսկ ամբողջական չեն:

Նաեւ յստակ տուեալներ գոյութիւն չունին գիտնալու համար, թէ կողոպուտը որքանով կազմակերպուած էր: Թանգարանին պատասխանատուները իրեւ ծրագրուած յարձակումի փաստ կը յիշեն այն բանալիները եւ ապակի կտորոց շեղբերը, զորս գտած են թանգարանին մէջ: Պատասխանատու մը կ'ըսէ, թէ տեսած է «Եւրոպացիի երեւոյթով» մարդիկ, որոնք թանգարան մտած են բազմութիւններու հետ եւ ցոյց տուած են տարբեր գանձեր, ապա հեռացած են: «Կողոպուտին ետին չարանեղ ձեռքեր կային, կ'ըսէ Խալիլ: Անոնք առած են թանկագին նմուշներ եւ իրենց ետին ձգած են նուազ արժէքաւորները»:


Վերջերս Լոնտոնի մէջ կայացած հանդիպումի մը առիթով շախարհի գլխաւոր թանգարաններէն ներկայացուցիչներ որոշեցին վերակառուցել Իրաքի կողոպուտուած մշակութային հաստատութիւնները: Պաղատաւի թանգարանին ուսումնասիրական բաժանմունքին տնօրէնը՝ Տոնի Ճորձը կ'ըսէ, թէ կողոպուտին կարեւոր մէկ մասը կազմակերպուած էր:

Ազգային թանգարանէն մասնագէտներ, որոնք մեծապէս յարգուած են, չեն ընդունիր այն կարծիքը, թէ թանգարանը թիրախ դարձած է իրեւ Սատամ Հիւսէյնի իշխանութեան մէկ խորհրդանիշը: Սակայն անոնք կ'ընդունին, թէ մասնաւոր վերջին տարիներուն պետութիւնը զօրավիգ կանգնած է թանգարանին աշխատանքներուն: Թանգարանը 1991ի Մոցի պատերազմէն ետք առաջին անգամ ըլլալով վերաբացուած է 2000ին:



Տապալած քանդակի մը գլուխը

րող լուրերը նոր կը հասնին Պաղատաւ: Խալիլ, որ պատասխանատու է Իրաքի ազգային բոլոր



Պաղատաւի թանգարանին դատարկ ցուցափեղկերը

հնութիւններուն, կ'ըսէ, թէ Նիմրուտի, Աշուրի, Հատարայի, Սամարայի եւ Նիւնուէի թանգարանները չեն կողոպտուած, սակայն Սուսուլի թանգարանը ծանր վնասներ կրած է: «Նոր թանգարան մը պիտի բանայինք թիրախի մէջ, սակայն անիկա ռմբակոծուեցաւ», կ'ըսէ ան:

Տեղեկութիւններ սկսած են հասնիլ Պաղատաւի Ազգային թանգարանին կողմէ գլխաւորուած պեղումներու 32 վայրերու վերաբերեալ: Պեղումներու ընդհանուր տնօրէն Հաննա Խալիլը կ'ըսէ, թէ մինչեւ պատերազմին սկիզբը պեղուած վայրեր լաւապէս պաշտպանուած էին գողցուած չէին: Ան կ'ըսէ, թէ ցարդ տեղեկութիւն ստացած է անոնցմէ 5ին վերաբերեալ:

Սուսուլի, Քերքուքի, Նաթաֆի, Պաքուպայի եւ Աշուրեանյի տարածքին պեղումներու առնչուող կառուցանքներ կողոպուտուած են: Սակայն Խալիլը մանրամասն տեղեկութիւններ չունի նոր պեղումներէ յայտնաբերուած իրերու կողոպուտին տարողութեան վերաբերեալ:

Խալիլը կ'ըսէ, թէ պեղումները շարունակելը դժուար է, որովհետեւ իր բաժանմունքին բոլոր փոխարամիթոցները՝ 40 նոր ինքնաշարժներ եւ փոխարակառքեր գողցուած են: Նոյնինքն թանգարանին մէջ վարչական գրասենեակները կողոպուտուած են:

«Անհրաժեշտ մարդիկը կան, սակայն աշխատելու միջոցներ չունինք», կ'ըսէ ան: (ՀԱՍՏԱՐԱՔԱՐ)

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ՔԱԶՊԱԼԵՐԱԾ ԵՆ ԿՈՂՈՊՈՒՏԸ

«Պի. Պի. Սի.»-ի ԿՈՂՍԵ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ ԿԸ ՓԱՍՏԵՆ, ԹԵ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ԿԱՍԱԳ ԼՈՅՍ ՏՈՒԱԾ ԵՆ ԳՈՂԵՐՈՒ ԵՒ ԱՄԲՈՒՆԵՐԸ ԸՐԱԻՐԱԾ ԵՆ ԿՈՂՈՊՈՒՏԻ: ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶՈՂՈՔՈՐԹ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՒ ՄԸ ԿԸ ՄԵՐԺԵՆ ԸՆԴՈՒՆԻԼ ՈՐԵՒԵ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ

Պեյճիքայի պատերազմի ոճիրներու առեանը կը սպառնայ դատական հետապնդումի ենթարկել զօրավար Թոմի Տրէնքը՝ յայտարարելով, թէ ամերիկեան բանակը չէ յաջողած կանխարգիլել կողոպուտը Իրաքի մէջ:

Նասըրիայի Արհեստագիտական Հիմնարկին մէջ դասաւանդումը կանգ առած է: Մինչ քաղաքը կը փորձէ յոռի կանգնիլ պատերազմէն ետք, հիմնարկը վերջին բանն է, որուն մասին կը մտածեն մարդիկ:

Թերեւս պատճառը նաեւ այն է, որ երբ Սատամ Հիւսէյնի բանակը խոյս տուաւ քաղաքէն եւ ամերիկացի զինուորներ ներս մտան, գողեր մերկացուցին բարձրագոյն կրթութեան այս կեդրոնը: Այսօր անոր կամխքը մնացած է. տարբալուծարաններ եւ յարաններ իրենց անցեալին ածիացած շուքն են միայն:

Այսուհանդերձ, ի տարբերութիւն լետ պատերազմեան կողոպուտի բազմաթիւ ղէպերու, այս մէկը դիւրութեամբ կարելի էր կանխարգիլել, կ'ըսէ հիմնարկին տնօրէնը՝ դոկտ. Խալիլ Մաթիտ:

Երբ հիմնարկը դիմած է ամերիկացի զինուորներու օգնութեան, անոնք ոչ միայն մերժած են ընդառաջել, այլ կարգ մը ակնատեսի վկայութիւններու համաձայն, նոյնիսկ քաջալերած են գողերը, որպէսզի խուժեն դպրոց:

Միացեալ Նահանգները չեն ժխտել իրադարձութիւնը, սակայն կ'ըսեն, թէ դպրոցներու պաշտպանութիւնը իրենց պատասխանատուութիւնը չէ:

Խալիլ Մաթիտ, որ ընկերային առողջապահութեան դասախօս է հիմնարկին մէջ, կառույցին մէջ կը գտնուէր այն օրը, երբ հարիւրաւոր գողեր հաւաքուած էին անոր առջեւ:

Այդ ժամանակ անիշխանութիւնը կը տիրէր Նասըրիայի մէջ: Զուրն ու ելեկտրականութիւնը ընդհատուած էին, ոստիկանութիւնը ցրուած էր եւ գողեր դատարաններ էին բազմաթիւ կառուցներ:

Թուականը երեքշաբթի, 8 Ապրիլ էր, թէեւ Մաթիտ գայն կը յիշէ միայն իրեւ Պաղատաւի անկումին նախորդ օրը:

«Ամբոխները ծածկած էին իրենց ղէմքը, դանակներ եւ «Քալաշնիքով»ներ կը կրէին: Անոնք



Ամերիկացի զինուորներ կը դիտեն կողոպուտը

կը պոռային եւ կ'ըսէին. «Ամէն ինչ պիտի առնենք այս հիմնարկէն», կը յիշէ Մաթիտ:

Հիմնարկը ունէր իր սեփական պահակները, շուրջ 7 հոգի: Անոնցմէ 3ը զինուած էին: Սակայն Մաթիտ անդրադարձած է, թէ անոնք բաւարար չէին ամբոխին դիմադրելու:

«Հիմնարկին գիտութեան բաժանմունքին առջեւ ամերիկեան անցարգելի մը դիմեցի եւ օգնութիւն խնդրեցի՝ ըսելով, որ մարդիկ կ'ուզէին կողոպտել կառույցը: Անոնք պատասխանեցին, թէ չէին կրնար օգնել, որովհետեւ իրենց պարտականութիւնը միայն անցարգելի հաստատելն էր. կը պատմէ Մաթիտ: Հետեւաբար քալեցի ղէպի կամուրջը եւ դիմեցի հոն գտնուող ամերիկացի զինուորներուն: Սակայն անոնք եւս չուզեցին օգնել»:

Մինչ այդ, Մաթիտի պաշտօնակիցներէն մէկը յաջողած էր հրահրել ընդհանրու կայարանի մը մօտ հաստատուած ամերիկացիներ, որոնք հասած էին 5 փոխարակառքերով, սակայն մերժած էին ցրուել գողերը: Փոխարկէնը՝ անոնք կրակած էին հիմնարկին հարաւային պատին վրայ:

«Արիկա կանաչ լոյս մըն էր գողերուն համար: Անիկա կ'ըսէր. «Ոչինչ պիտի ընենք ձեր դէմ, ձեր արարքը կանխարգիլելու համար»:



Ամերիկացիները գացած էին հինգ վայրկեան ետք եւ աւարառուները ներս մտած էին:



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## Հ. Մ. Ը. Մ. ԿԸ ՍՏԱՆԱՅ ՇՆՈՐՀԱԴՈՐԱԳԻՐՆԵՐ

Հ. Մ. Ը. Մ. Ի Լիբանանի Շրջանային Վարչությունը, շնորհատրազիր մր ստացաւ Լիբանանի փինկ փոնկի ֆետերասիոնէն, որ կը շնորհատրէ Լիբանանի փինկ փոնկի աղջկանց խումբը, որ անցեալ շաբաթավերջին հանդիսացաւ Լիբանանի ախոյեան:

Իր կարգին, Հ. Մ. Ը. Մ. Ի Լիբանանի Շրջանային Վարչությունը շնորհատրեց Ղապիթ ակումբը, որ հանդիսացաւ Լիբանանի վոլեյբոլի ախոյեան:

### ՊԱՍԲԵԹՊՈԼ

## Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԱՆՑԱԻ ՅԱԶՈՐԴ ԶԱՆԳՐՈՒԱՆ

Երէկ, «Տոնա Մարիա»-ի դաշտին վրայ, Լիբանանի դաստիարակող փարիթային ախոյեանութեան ծիրէն ներս, 86-87ի ծնունդի Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի աղջկանց կազմը 73-65 արդիւնքով յաղթեց Անդրանիկի (Կիսախաղ՝ 35-30): Հ.Մ.Ը.Մ. Ի լաւագոյն սորորները եղան Մարին Գոյունճեան (31 կէպ), եւ Յոլինէ Գազանճեան (25 կէպ):

Այսօր, Հ.Մ.Ը.Մ. Ի կազմը կ'աղաչուի Վալիսի դաշտին հանգրուանին փոստը:

## ՊԵՐԿՔԱՄՓ ԿԸ ՅՈՒՍԱՅ ՆՈՐՈԳԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՍԵՆԱԼԻ ՀԵՏ

Անգլիոյ ֆութբոլի բաժակի մրցաշարքին աւարտական մրցումին նախօրեակին, որ տեղի պիտի ունենայ շաբաթավերջին, Արսենալի հոլանտացի յառաջապահ Տենիս Պերկքամփ կը յուսայ, որ ակումբին պատասխանատուները համաձայն գտնուին իր պայմանագրութիւնը երկարաձգել, նկատի ունենալով, որ անոր պայմանագրութիւնը լոնտոնեան կազմին հետ կ'աւարտի 2002-2003 եղանակի աւարտին:

Ըստ շրջան ընող տարածալրտրութիւններուն, Արսենալ կը մտադրէ 34 տարեկան Պերկքամփի պայմանագրութիւնը երկարաձգել, այն պայմանով սակայն, որ ան համաձայն գտնուի իր անսակահին նուազումը ընդունի:

79 անգամ Հոլանտայի ֆութբոլի ազգային խումբին շապիկը կրած Պերկքամփ, Արսենալի հետ երկու անգամ շահած է ախոյեանութիւնը, իսկ երկու անգամ ալ՝ Անգլիոյ բաժակը: Ութ եղանակի ընթացքին, ան Արսենալի հետ նշանակած է 100 կոլ:

Անոր իմբակից, ֆրանսացի Փաթրիք Վիէյրալի պայմանագրութեան աւարտին մնացած է մէկ եղանակ: Հակառակ այդ մէկին սակայն, 27 տարեկան Վիէյրալ կը փափաքի յաւելեալ տարիներ եւս մնալ իր կազմին հետ, որովհետեւ ան պատրաստ է մերժելու Ռէալ Մատրիտէն կամ Եուվենթուսէն ներկայացած առաջարկները:

**ԱՉՅՍ ՏԵՍՄԻ**

**ՄԱՐԶԻԿ**

Ի.Բ. ՏԱՐԻ, 2003  
ԹԻԻ 4 (250)

**85 ԱՄԵԱԿԻ ՏԱՐԻՆ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

«Մարզիկ»-ի այս թիւով տեսնել՝

- Խմբագրական - Մակարդակի գիտակցութիւն
- «Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան» Գ. հատորը - Ժաք Յակոբեան
- Հ.Մ.Ը.Մ. Ի հիմնադրութեան օրերէն յուզեր (Գ) - Շաւարշ Ա. Քինյ, Մեհրապեան
- Խոտ, Բուրդ եւ Նաւասարդեան խաղեր - Պետրոս Շեմսեան
- Հ.Մ.Ը.Մ. Ի սկսուտական շարժումը Չաւախքի մէջ ծիւրեր կու տայ
- Յաղթանակի մը իմաստը - Յ. Գեղարդ
- Հ.Մ.Ը.Մ. Ի Լիբանանի ֆութբոլի խումբը դարձեալ մեծերու կողքին

Թիւր կ'ընդգրկէ նաեւ սկսուտական, մանկապատանեկան եւ Համազանցի բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ. ական կեանքի անդրադարձեր:

Ստանալու, Համար գինը՝ Համազանցի գրախաւնութիւն:

## ՍԱՐԶԻՉ ՍԱՐԳԱՐԵԱՆ ԽՈՇՏԱՆԳՈՒԵՑԱԻ ԻՐ ԻՍԿ ԸԱՍԱԿԻՐՆԵՐՈՒՆ ԿՈՂՍԵ

Յունաստանի ֆութբոլի ախոյեանութեան 29րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն, անցեալ շաբաթավերջին տեղի ունեցաւ զագաթի ճակատումը՝ Օլիմփիաքոսի եւ Փանաթինայքոսի միջեւ, առաջինին դաշտին վրայ: Մրցումը վերջ գտաւ 3-0 արդիւնքով, ի նպաստ՝ հիւրընկալ կազմին:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Օլիմփիաքոս գրաւեց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, իր ունեցած կոլէվերէյճին շնորհիւ զերպանցելով Փանաթինայքոսը:

Շաբաթակիցքին, երբ Փանաթինայքոսի մարզիկները իրենց փորձերը կը կատարէին, շուրջ 250 պայրացած համակիրներ դաշտ խուժելով խոտանգեցին իրենց մարզիչը՝ Սերճիօ Մարգարեանը, դաշտին հացուցին նիւթակա մեծ վնասներ, ինչպէս նաեւ բազմաթիւ մարզիկներու ինքնաշարժները կոտորեցին:

Նախքան փորձերը

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

## ՓԻՍԹԸՆԶ ԴԺՈՒԱՐ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ՏԱՐԱԻ ՍԻՔՍԸՐԶԻ ԴԻՄ

ԷՆ. ՊԻ. Էյ. Ի փլէյժօֆի կիսաւարտական հանգրուանի մրցումներուն, երէկ Տիբրոյի Փիսթընկ (Արեւելեան գօտի), որ իր դաշտին վրայ հիւրընկալեց Ֆիլատելֆիա Սիքսթըրսը, մէկ կէտի տարբերութեամբ միայն (78-77) յաղթանակ մը արձանագրելէ ետք, այժմ 3-2 արդիւնքով կը յառաջանայ անոր վրայ: Վեցերորդ մրցումին, որ տեղի պիտի ունենայ վաղը՝ Շաբաթ յաղթանակ մը եւս արձանագրելու պարագային (Ֆիլատելֆիայի մէջ), անիկա 13 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով պիտի ապահովէ աւարտական մրցումին իր տոսը: Հասարակութեան մը պարագային (3-3) եօթներորդ եւ վճռական մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի օր՝ Տիբրոյի մէջ:

Երէկուան մրցումին յաղթական կազմին մարզիկներէն Ռիչըրտ Հէմիլթըն նշանակեց 20 կէտ: Սիքսթըրսի մարզիկ Էլըն Այվըրըն փլէյժօֆի մրցումներուն իր ամենէն ձախող ելոյթը ունեցաւ, երբ նշանակեց միայն 14 կէտ: Անոր խմբակից Տերիք Քոլման նշանակեց 23 կէտ եւ 11 ռիպաունտ:

սկսելով, Մարգարեան իր մարզիկներուն ըսած էր, թէ յառաջիկայ Մայիս 25ին Աքրաթիքոսի դէմ իր վերջին մրցումը կատարելէ ետք պիտի լքէ խումբը: Իր պաշտօնը ստանձնելէն ետք, Մարգարեան Փանաթինայքոսի հետ կատարեց քառասուն մրցում եւ միայն Օլիմփիաքոսի դէմ պարտութիւն կրեց:

Ոստիկանութիւնը յայտնեց, թէ այդ միջադէպէն ետք ձերբակալեց երկու անձեր:

Վերջին հանգրուանին երկու խումբերը եթէ յաղթանակ արձանագրեն, անոնք պիտի ունենան 70ական կէտ, թէեւ Օլիմփիաքոսի կոլէվերէյճը այժմ աւելի լաւ է, սակայն այդ մէկը նկատի չ'առնուիր, այլ՝ անոնց միջեւ տեղի ունեցած մրցումներուն արդիւնքը, որ ի նպաստ Օլիմփիաքոսի է: Դարձին, իր դաշտին վրայ 3-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած Օլիմփիաքոս, երթին 3-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց Փանաթինայքոսէն:

**ԵԿԵՔ ՃԱՐԱԴՊՐԵՆՔ**

Կը սիրեն պատմութիւններ հնարի, երեսակայութիւնը աշխատցնել, շարադրել...

Մասնակցէ՛ «Պատիկ-Մատիկ»-ի շարադրութեան մրցումին:

- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:
- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 12-27 Մայիս, հեռաձայնելով 01-260115 թիւին, երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00:
- Մրցումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 1 Յունիսին, «Յ. Տեր Մեյրոնեան» թատերասրահին մէջ, առաւօտեան ժամը 10:00-12:30:
- Իւրաքանչիւր մակարդակի առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացողները պիտի ստանան արժէքատր նուէրներ:
- Արդիւնքները պիտի յայտարարուին «Պատիկ-Մատիկ»-ի Յունիսի թիւին մէջ:
- Յաւելեալ տեղեկութիւններ տեսնել «Պատիկ-Մատիկ»-ի Մայիսի թիւին եւ «Ազգակ»-ի մէջ:

**ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ՌԻԽՏԻ ՕՐ**

Միաթարեան հայրերը հաճոյքով կը ծանուցանեն, թէ Կիրակի, 18 Մայիս 2003ին՝ ՏԱՐԵԿԱՆ ՌԻԽՏԻ ՕՐ Է ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱՅԻ:

Չայնաւոր Ս. պատարագը պիտի մատուցուի կեսօրէ ետք ժամը 5:00ին, Ռաուտայի ուխտատեղիին մէջ, որուն պիտի յաջորդէ աւանդական ՆԵՒԱՐԸԱՍԵՐՁԵՐՆ ՈՒ ՎԱՐԴԵՐՈՒԹԻՆԸ:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

**Շ. ԳՐԻԳՈՐԻՍ Ե. ՎՐԴ. ՍԵՐԵՆԵԱՆ**

ԵԱՆՕԹ. Ա. Դիւրացնելու համար հաւատացեալներու երթելը՝ տրամադրուած են Հոփսիմեանց վարժարանին փոխադրակառքերը, որոնք պիտի սկսին իրենց ծառայութեան, հետեւեալ ժամադրաւարներէն, ստորեւ նշուած օրակարգով.

- 1.- Անթիլիաս՝ Սիմիթեան շէքեր. մեկնում՝ ժամը 16:00ին:
- 2.- Չալքա՝ Ս. Խաչ եկեղեցի. մեկնում՝ ժամը 16:15ին:
- 3.- Ֆանար՝ Շայկական շէքերու հրապարակ. մեկնում՝ ժամը 16:15ին:
- 4.- Պուրճ Շամուտ՝ Ս. Ազնետ վարժարան. մեկնում՝ ժամը 16:00ին:
- 5.- Պուրճ Շամուտ՝ Ս. Ազնետ վարժարան. մեկնում՝ ժամը 16:20ին:
- 6.- Ամանոս՝ Նախախնամութեան (Providence) վարժարանի առջեւ. մեկնում՝ ժամը 16:15ին:
- 7.- Տեհթաուի՝ Շայ Կաթողիկէ պատրիարքարան. մեկնում՝ ժամը 16:00ին:

Բ.- Պատուելու համար Սրբուհի Ռիթայի մահուան ճիշդ թուականը, 22 Մայիս 1457, այս տարի եւս անմահ Ս. պատարագ պիտի մատուցուի Ռաուտայի ուխտատեղիի մէջ, 22 Մայիս, երկուշաբթի ժամը 6:00ին:

**ԴԻՒՆ ՈՒՍԱՏԵՐԻԻ**

## ԱՀՏ - Հ. Մ. Ը. Մ. ՄՐՑՈՒՄԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ



Հ. Մ. Ը. Մ. Ի մարզիկները՝ մրցումէն առաջ կ'ողջունեն համակիրները



Վարդան Ղազարեանի անկրկնելի լուպը. գնդակը կ'ուղղուի դէպի Պիլալ Հաշէմի բերդ



Հ. Մ. Ը. Մ. Ի մարզիկները, որոնք կը տօնեն իրենց արձանագրած յաղթանակը



Մարգական Աւանի դաշտին մէջ գտնուող Հ. Մ. Ը. Մ. Ի համակիրներէն մաս մը



Հ. Մ. Ը. Մ. Ի համակիրները, որոնք մրցումէն ետք իրենց տօնախմբութիւնը կը շարունակեն Պուրճ Շամուտի մէջ (Լուսանկարները՝ ՍԻՐԻՏՈ-ՅՈՐԹ ՏԻԳՐԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ)

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

Լիբանանի մէջ թէ այլուր կրթական յառաջադիմ հաստատութիւններ կ'օգտուին

**ՓՈԼԻԿԼՕԹ ԶՈԼԵՃԵՆ**

Շրջանաւարտ Ուսուցիչներու Ծառայութեան Անոնք ունին

- Մանկավարժական մասնագիտութիւն
- Կոչում եւ նուիրում կրթական գործին
- Լիբանանեան պետական ծրագրին քաջ-ծանօթութիւն
- Պետական մանկավարժական վկայական BT. TS.
- ՓՈԼԻԿԼՕԹ քուէնը կ'երաշխաւորէ իր շրջանաւարտները:

Դիմել՝

**POLYGLOT EMPLOYMENT DEPARTMENT**  
Dora - Tel. 01-251320

### ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱՆ

Մ. Նահանգներ երկ կննդադարձ են Սեդուպական Արաքիան, յայտնելով, թե անհիկա անհրաժեշտ քայլերուն չէ դիմած կանխարգիլելու համար Ռիադի մէջ շաբաթասկիզբի անձնատանակալ գործողութիւնները, որոնք առնուազն 34 զոհ խլած են:

Ս. Արաքիոյ կառավարութիւնը նշեալ գործողութիւններէն ետք խոստացած էր ձգմել ահաբեկչութիւնը, սակայն անհիկա խոստովանած էր նաեւ, թէ առաջիկային վերաբերող քայլերը թերի եղած են:

Սակայն ամերիկացի դաշնակազմարարներ փորձած են ամէն գնով մեղմացնել իրենց քննադատութիւնները երկրի մը դէմ, որ այժմ կ'ենթադրուի, թէ «Քայի-բա» ցանցին գործունէութեան կեդրոնն է:

Ամերիկեան Ազգային առաջնորդութեան հարցերու խորհրդակալ Քոնդոլիզա Ռայս Ուաշինգթոնի մէջ թղթակիցներու ըսած է, թէ Մ. Նահանգներ «լաւ գործակցութիւն ունին սեդուպակա կառավարութեան հետ» եւ Ռիադի դէպքերէն ետք «դիւրի ուղեւոր թափ փալ այդ գործակցութեան»:

Սոմալիական Տան քանքեր Արի Ֆայսլըրը ըստ է, թէ «Քայիբա» ցանցը յարձակումներուն «զլխաւոր կասկածելին» է եւ թէ Ռիադ «աւելին ողբեր է ընէ» երկրին մէջ ահաբեկիչները արմատախիլ ընելու համար:

(ԱՖՓ)

### ԹՈՒՐԲԻՈՅ ՈՒՐԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԿ ԱՅԼ ՊՏՈՒՂԸ

ԷԶ 5

### ԱՐԱՑԱԹ ԴԱՏԱ ՊԱՐՏԵՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Իսրայէլացի այլ նախարար մը՝ ներքին ապահովութեան հարցերու նախարար Յայի Տաննէկի իր կարգին խոստացաւ, որ հրեաները մօտ օրէն արտօժնութիւն պիտի ունենան աղօթելու Երուսաղէմի մզկիթի համալիրին մէջ, որ կանգնած է հրեական ամենատուրք նկատուած սրբավայրի վրայ: Հաննէկի ըսաւ, որ հանդուրժելի չէ այն դրութիւնը, ուր բոլոր իրօժններու հաւատացեալներու՝ կ'արգիլուի աղօթել յիշեալ սրբավայրին մէջ, որ կը պատկանի բոլորին:

Իսլամական Ուաքֆը, որուն հովանաւորութեան ենթակայ է սրբավայրը, կը պնդէ որ անհիկա իսլամական հող է: Մեկտեմբեր 2000էն ի վեր, Ուաքֆը արգիլած է ոչ իսլամական սրբավայր մուտքը:

Չինուորական գործողութիւններու զետեղ վրայ իսրայէլեան բանակը երկ լայնածիր արշալի մը ձեռնարկեց Կազախի դէմ, ուր սպաննուեցան հինգ պաղեստինցիներ: Չորս հոգի սպաննուեցաւ Պէթ Հանունի մէջ, իսկ չորրորդ մը՝ Ժապալիա գաղթականին մէջ: Պէթ Հանունի գոհեղուն կարգին էր 12 տարեկան պատանի մը: 16 ուրիշներ ալ վիրաւորուեցան գործողութեան ընթացքին: Իսրայէլեան բանակը ուղղաթիւններով, հրասայլներով ու գրահապատներով Կազա ճերխուժեց առաւօտեան կանուխ ժամերուն: Բանակը ըսաւ որ գործողութեան թիրախը ծայրայեղականներու ձեռնարկութիւնն ու խուզարկութիւններն են:

### ԻՐԱՅԵԼԱՑԻԸ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆՑԻԸ ՊԵՏԷ Ե ՊԱՏՐԱՍՏ ԸԼԼԱՆ ԶԻՋԵԼՈՒ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը ըսաւ, որ իսրայէլացիներն ու պաղեստինցիները պատրաստ պէտք է ըլլան զիջումներ կատարելու՝ Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն հաստատելու համար:

Փաուլը, որ կը խօսէր Պուկարիոյ մէջ, դիտել տուաւ, թէ կարելի չէ նոյն կէտին վրայ կանգնած մնալ ստուած պահելով ամէն ինչ եւ խոչընդոտելով խաղաղութեան գործընթացին յառաջխաղացքը: Փաուլը աւելցուց, որ նախագահ ճորձ Պուշի յառաջիկայի հանդիպումները Հարունի եւ պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպախի հետ կարեւոր պիտի ըլլան: Փաուլը շեշտեց, որ խաղաղութեան ճամբը քարտէսը առիթ մըն է, գոր պէտք չէ կորսնցնել:

Միւս կողմէ, Իտալիոյ արտաքին գործոց նախարար Ֆրանքո Ֆրաթթինի առաջարկեց, որ Հոնոմ օգտագործէ Իսրայէլի հետ «մտերիմ կապերը» օժանդակելու համար պաղեստինցիներու իսրայէլեան տագնապին լուծման, յայտնեց Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմետ Մահեր՝ Ֆրաթթինի հետ հանդիպումի մը ատարին:

ԸԱԹԱՐ պատրաստ է բարելաւելու իսրայէլի հետ կապերը, եթէ յառաջխաղացք արձանագրուի խաղաղութեան գործընթացի ճամբուն վրայ, ըսաւ արտաքին գործոց նախարար շէյխ Համատ Պրն ժասէն:

### ԹՐԵԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՃՆՇՈՒՄ ԲԱՆԵՑՆԵԼ ՄԱՐԴԱՎՅՈՒՆ ԻՐԱԿԱՆՑ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ԵՒ ԱՅԼԱԽՈՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Մինչ թրքական իշխանութիւնները կը շարունակեն ճնշում քանցնել մարդկային իրաւանց խմբակներու եւ այլախոհներու վրայ, քննադատներ հարց կու տան, թէ արդեօք կառավարութիւնը իսկապէս վճռած է Եւրոպական Միութեան ժողովրդավարական չափանիշները որդեգրել:

«Ապատրիւններու ճնշումը իրաւական ճնշումի վերածուեցաւ», ըսած է Թուրքիոյ Մարդկային Իրաւանց Ընկերակցութեան նախագահ Հիւսնի Էօստիլ երէկ:

Ասիկա մտայնութեան հարց է: Ապահովութեան հսկող մարկերու պաշտօնատարները «առողջ ձեռով չեն նայիր մարդկային իրաւունքներու հարցին», ըսած է ան:

Էօստիլը անցեալ շաբաթ ժողովրդավարացման առնչուող ժողովի մը ներկայ գտնուած է արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլիլի եւ քաղաքացիական իրաւունքները պաշտպանող խմբակներու միջեւ, ոստիկանութեան կողմէ իր գրասենեակին եւ իր ընկերակցութեան մէկ այլ մասնաճիւղին գրասենեակին վրայ յարձակումէ մը ետք, որուն ընթացքին համակարգիչներ, «տիպէթ»ներ եւ արխիւային թղթածրարներ գրաւուած են:

Յարձակումը խստի քննադատուած է Եւրոպական Միութեան կողմէ: Ընդարձակման հարցերու յանձնակատար Կուլմբրը վերհեօկընի բանբերը՝ Ժան - Բրիսթֆ Ֆիլորի, ըսած է, թէ «մեծ վիճակ» գոյութիւն ունի յայտարարուած բարեկարգումներու եւ անոնց կիրարկումին միջեւ:

Ե. Միութիւնը Դեկտեմբեր 2004ին Թուրքիոյ մարդկային իրաւանց մարկին մէջ արձանագրած յառաջդիմութեան գնահատումը պիտի կատարէ, որոշելի առաջ, թէ անդամակցութեան գծով բանակցութեանց պիտի սկսի անոր հետ:

### ՅՈՒՆԱՍՏԱՆ ԿԸ ԸՆՆԱԴԱՏԷ ԹՈՒՐԲԻԱՆ

Միւս կողմէ, Յունաստանի արտաքին գործոց նախարարութիւնը երէկ հաղորդագրութեան մը մէջ յայտնած է, թէ Աթէնք Ե. Միութեան յղուած գրութեան մը մէջ քննադատուած է Անգարան, որ հետեւողական կերպով իր օդային տարածքը բռնաբարած է:

Դէպքերը պատահած են անցնող քանի մը ամիսներուն, Եգէական Օժովուն մէջ:

(ԱՖՓ)

### ԼԻԲԱՆԱՆ

### ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԿԸ ԴԱՏԱ ՊԱՐՏԵՒ ԶԵՉԵՆԻՈՅ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ վարչապետարանին մէջ ընդունեց երեսփոխաններ Նիքոլայ Ֆաթթուշը եւ Ահմէտ Հապուր, որոնց հետ քննարկեց բարգաւաճման առընչուող տարբեր ծրագիրներ:

Վարչապետ Հարիրիի այցելեցին նաեւ Լիբանանի մէջ Փաքիստանի դեսպան Խալիլ Մոհամէտ Միր, Քուէյթի մէջ Լիբանանի դեսպան Խալիլ Քելլանի եւ նախկին նախարար Ֆուատ Պուրրուս:

Վարչապետ Հարիրի երէկ հեռագիր մը յղեց Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի եւ ցաւակցութիւն յայտնեց Չեչենիոյ մէջ նախանցեալ օրուան ահաբեկչական պայթումներուն համար, նշելով, որ այսպիսի արարքներ ծիսական պաղեցութիւն կը ձգեն իսլամներուն արժանապատուութեան վրայ:

Վարչապետ Հարիրի յոյս յայտնեց, որ Ռուսիա շարունակէ բարգաւաճիլ, պահպանելով իր կայունութիւնը:

### ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՆԿԱՏԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ԻՐԱՔԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՌԿԱԽԵԼՈՒ ԶԱՐՑԸ



Փաուլը եւ Պուկարիոյ վարչապետ Սիմէոն Բ.

Միացեալ Նահանգներ նկատի պիտի ունենան Իրաքի պատժամիջոցներ միայն առկայելու որոշումը, որպէսզի Իրաք կարենայ վերսկսել քարի-ղի արտածման եւ տնտեսութիւնը բարելաւելու, յայտնեց արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը:

Փաուլը, որ կը խօսէր Պուկարիա այցելութեան ընթացքին, դիտել տուաւ սակայն, որ Ուաշինգթոն տակաւին հաստատ կը մնայ պատժամիջոցները անբողջութեամբ ջնջելու առաջարկին վրայ, որուն գծով բանաձեւ մը պատրաստուած է Ապահովութեան խորհուրդին ներկայացուելու: Փաուլը աւելցուց, որ ինչ ալ ըլլայ որոշումը պէտք է արագ տրուի, որպէսզի կարելի ըլլայ արտածել իրաքեան քարիղը եւ եկամուտներ ապահովել իրաքցի ժողովուրդին կենսական պէտքերը հոգայու համար:

Մինչ այդ, ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը կը պատրաստուէր քննարկելու բանաձեւի առաջարկ մը, որ ներկայացուած է Միացեալ Նահանգներու կողմէ եւ որ կը պահանջէ առկայելու Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցները: Բանաձեւը կը վայելէ Բրիտանիոյ եւ այլ երկիրներու օրակցութիւնը: Սակայն Ապահովութեան խորհուրդի անդամ Ֆրանսա եւ Ռուսիա վերապահութիւններ ունին եւ կը պահանջեն, որ պատժամիջոցներ ջնջելու առաջ հաստատուի, թէ Իրաք վերջ է հաւաքական քանդումի վերջերէ: Ռուսիա երաշխիք կ'ուզէ, որ պատժամիջոցներ ջնջելով՝ պիտի չըջուի Պաղտատի պարտք Մոսկուայի, ինչպէս նաեւ՝ Մոսկուա պիտի չկորսնցնէ քարիղի պայմանագրութիւնները Իրաքի մէջ: Պաղտատ աւելի քան ութ միլիար տոյար պարտք ունի Մոսկուայի:

Միւս կողմէ, Պաղտատի մէջ, իրաքեան քաղաքական խմբակներու ներկայացուցիչներ կը պատրաստուէին իրենց առաջին հանդիպումին ամերիկեան քաղաքացիական իշխանութեան ղեկավար Փոլ Պրեմրիի հետ: Իրաքեան քաղաքական շրջանակները դժգոհ են, որովհետեւ կը նկատեն, թէ ամերիկեան իշխանութիւնը օրբսօրէ աւելի կ'անրապնդուի Իրաքի վրայ: Անոնք կ'ըսեն, որ ամերիկացիները քիչ քան կը ձգեն իրաքցիներու ձեռքը, ամէն ինչ առնելով իրենց հակակշիռի տակ: Իրաքցի ղեկավարները դժգոհ են յատկապէս ամերիկեան այն առաջարկէն, որ կը միտի իրաքեան քարիղը դնել ամերիկեան հակակշիռի տակ:

Պաղտատի մէջ երէկ բողոքի ցոյցի մը մասնակցեցան քանի մը հարիւր իրաքցիներ, որոնք իսլամական կառավարութեան մը հաստատումը կը պահանջեն: Անոնք կ'ուզեն, որ կրօնաւորներ ստանան իշխանութիւնը, ոչ թէ ամերիկացիներուն կողմէ ընտրուած ղեկավարներ:

(ԱՖՓ)

**AIR-KOOL**  
air-conditioning

Be COOL with AIR-KOOL

THE SUPER SILENT BRAND NEW HEAT-PUMP A/C WITH WARRANTY  
Starting 250\$

Sole Agent:  
**G. Ayanian & Sons**  
Dora, (01) 255222/3/4/5/6 - Gemmayzé, (01) 447000-445396 - (03) 627728/9  
Fax: (01) 265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb  
www.ayanian.com

**ԱՖՀԻԼ AFHIL**

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

• Over Bed Table

• All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service,
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ԶՈՒՑԱՍՐԱՐ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԵՆԻ (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.